

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՆՅԿԱՅՎՈՂ ՄՐՅՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշմամբ հավելվածի 10-րդ կետով, Արթիկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածի թեկնածուի, ով համապատասխանում է հետևյալ չափանիշներին.

- 1) լինի 16-30 տարեկան երիտասարդ,
- 2) երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետում,
- 3) երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ,
- 4) երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

2. Թեկնածուի հետ կանցկացվի հարցազրույց, որի ժամանակ նա կներկայացնի իր պատկերացումները համայնքի երիտասարդության շուրջ ծառայած խնդիրների վերաբերյալ և կառաջարկի դրանց լուծման ուղիներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի գործունեության շրջանակներում: Հաշվի կառնվի թեկնածուի համապատասխանությունը ներկայացված չափորոշիչներին, երիտասարդության ոլորտում նրա փորձառությունը, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի առկայությունը, հարցազրույցի արդյունքները:

3. Մրցույթին մասնակցելու համար հարկավոր է ներկայացնել ինքնակենսագրություն (CV), դիպլոմների, պատվոգրերի, հավաստագրերի պատճեններ, տեղեկանք աշխատանքի վայրից /եթե աշխատում է/:

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Արթիկի համայնքապետարանի քարտուղարության,

անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին (հասցեն՝ Արթիկ համայնք, ք.Արթիկ, Ազատության հր. 1):

Մրցույթը կկայանա 2022 թվականի հունիսի 3-ին ժամը 15:00-ին Արթիկի համայնքապետարանի նիստերի դահլիճում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2022 թվականի հունիսի 2-ը, մինչև ժամը 18:00-ն: